



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍՏԻՂԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



OPEN SOCIETY FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

Զորակոչի ընթացքում, ինչպես նաև զորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերով, զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների բողոքարկման և վաղաժամ զորացրված զինծառայողների առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի հետ կապված գործերով`
ՀՀ իրավասու պետական մարմինների վարքագիծը`
ըստ մարդու իրավունքների սկզբունքների հանդեպ հարգանքի

ՎԱՆԱԶՈՐ

2021

Հեղինակներ՝ Արմինե Մաղիկյան

Հայկ Հակոբյան

Նազելի Մովսեսյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Նախաբան

Պարտադիր զինվորական ծառայության հատուկ ռեժիմից և զինված ուժերի փակ հաստատության կարգավիճակից ելնելով՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) առանցքային է համարում մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը եւ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը, ինչը նաեւ բխում է ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածից, որը սահմանում է, որ զինված ուժերը գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

Ինչպես Կազմակերպության բազմաթիվ ուսումնասիրություններն են ցույց տվել, զինված ուժերում մարդու իրավունքների խախտումները սկսվում են զորակոչի գործընթացում, եւ հենց այդ փուլում է առաջանում վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը, որն ուղղված է զորակոչիկների իրավունքների պաշտպանությանը եւ խախտված իրավունքների վերականգնմանը:

Հարկ է նշել, որ «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքագծի կանոնների» 27-րդ կետի՝ մասնակից պետություններից յուրաքանչյուրն ապահովում է, որ իր ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում ծառայող անձնակազմի հավաքագրումն ու զինակոչը համահունչ լինեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում իր կողմից ստանձնած պարտավորություններին:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ 1742 (2006) հանձնարարականի համաձայն՝ զինված ուժերը կառույց է, որը պատասխանատու է պետության հասարակության պաշտպանության համար: Հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները համազգեստով քաղաքացիներ են, ովքեր, հաշվի առնելով զինվորական ծառայության սահմանափակումները, ունեն նույն իրավունքները և ազատությունները և դրանց պաշտպանության իրավունքը, ինչպես մյուս քաղաքացիները:

Ուսումնասիրելով ոլորտին վերաբերող օրենսդրությունը, հաշվի առնելով Կազմակերպության կողմից զինվորական հաշվառման ենթակա անձանց, զորակոչիկների, պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների, կուրսանտների, սպաների, զորացրված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների, վաղաժամ զորացրված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների եւ նրանց ընտանիքի անդամների, մահացած զինծառայողի հարազատներին 2008 թ.-ից տրամադրվող իրավական աջակցության տվյալները՝ անդրադառնում ենք նրանց հետ առնչվող մարմինների վարքագծին:

Հարկ է նշել, որ համակարգված վիճակագրական տվյալներ առկա են 2010 թ.-ից սկսած: 2010-2019 թթ. Կազմակերպություն դիմած վերոնշյալ խմբի ներկայացուցիչների խնդիրների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվել են «ՀՀ պետական մարմինների վարքագիծը զորակոչի գործընթացում» զեկույցում:¹ 2020 և 2021 թթ. Կազմակերպություն դիմած վերոնշյալ խմբի ներկայացուցիչների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ստորև.

2020 և 2021 թթ. (հուլիսի 31-ի դրությամբ) իրավական աջակցություն ստանալու նպատակով Կազմակերպություն է դիմել 294 հոգի, որից

- զինվորական հաշվառման ենթակա անձ՝ 16,
- զորակոչիկ՝ 98,
- պարտադիր ժամկետային զինծառայող՝ 73,
- կուրսանտ՝ 1,
- պայմանագրային զինծառայող՝ 6,
- սպա՝ 7
- զինվորական ծառայությունից արձակված սպա՝ 2,
- զինվորական ծառայությունից վաղաժամ արձակված սպա՝ 1,
- սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացի՝ 7,
- պահեստազորում հաշվառված անձ՝ 31,

¹ https://drive.google.com/file/d/1lzCYtY_tg1pZPG6mfGUq5HnyCaAdIE2q/view

- գորացրված պարտադիր ժամկետային զինծառայող՝ 5,
- պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացի՝ 4,
- վաղաժամ գորացրված պարտադիր ժամկետային զինծառայող՝ 16,
- վաղաժամ գորացրված պայմանագրային զինծառայող՝ 3,
- զոհված զինծառայողի հարազատ՝ 7,
- անհայտ կորած զինծառայողի հարազատ՝ 15,
- ռազմագերու հարազատ՝ 1,
- զինվորական հոսպիտալի աշխատակից՝ 1:

Թվարկված անձանց մարդու իրավունքներին առնչվող խնդիրները հիմնականում կապված են եղել ՀՀ պետական հետևյալ մարմինների գործունեության հետ՝

- ՀՀ պաշտպանության նախարարություն,
- Կենտրոնական բժշկական հանձնաժողով,
- Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով,
- ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբ,
- ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչություն,
- ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայություն և տարածքային ստորաբաժանումներ,
- ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժիններ,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և բժշկասոցիալական փորձաքննության գրասենյակ,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
- Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ:

Իրավական աջակցություն ստանալու նպատակով կազմակերպություն դիմած նշված խմբի իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս, մասնավորապես՝ պարտադիր ժամկետային ծառայության, վարժական հավաքի կամ գորահավաքի համար

գորակոչի ենթակա քաղաքացիների ծանուցման, նրանց առողջական վիճակի հետազոտման, առողջական վիճակի վերաբերյալ կայացված բժշկական եզրակացությունների, պիտանիության վերաբերյալ որոշումների, պետական մարմինների գործողությունների, վերաբերմունքի, բժշկական եւ այլ փաստաթղթերի տրամադրման հետ կապված առնչվում ենք տարբեր պետական մարմինների հետ:

Իրավական աջակցություն ստանալու նպատակով կազմակերպություն դիմած զինվորական հաշվառման ենթակա անձանց, գորակոչիկների, պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների, կուրսանտների, սպաների, զորացրված (այդ թվում՝ վաղաժամ) պարտադիր ժամկետային, պայմանագրային զինծառայողների և սպաների իրավունքների պաշտպանությունն իր մեջ նաեւ ներառել է՝

- նշված անձանց վերաբերյալ կայացված որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկում՝ վարչական և դատական կարգով,
- զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու դեպքի առթիվ գորակոչիկի նկատմամբ հարուցված քրեական գործով իրավական աջակցության տրամադրում,
- վաղաժամ զորացրված զինծառայողի առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի կամ ոչ իրավաչափ գորակոչման հետ կապված գործերով իրավական աջակցության տրամադրում,
- ռազմական գործողությունների մասնակիցների կամ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության իրավունքի ապահովման և դրամական փոխհատուցման հետ կապված գործերով իրավական աջակցության տրամադրում:

Ներկայումս ՀՀ դատարանների վարույթում է գտնվում նշված խմբի անձանց գործերով հարուցված 19 դատական գործ, որոնցից՝

- 7 դատական գործ գտնվում է ՀՀ վարչական դատարանի վարույթում,
- 3 դատական գործ՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի վարույթում,
- 6 դատական գործ՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի վարույթում (քաղաքացիական գործեր),

- 3 դատական գործ՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում (քրեական գործեր):

Նշված 19 դատական գործերից՝

- 5 դատական գործը հարուցվել է 2017 թ-ին,
- 3 դատական գործը՝ 2018 թ-ին,
- 2 դատական գործը՝ 2019 թ-ին,
- 5 դատական գործը՝ 2020 թ-ին,
- 4 դատական գործը՝ 2021 թ-ին:

Տեղեկանքում ներկայացվում է զորակոչի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության և վերջինիս կազմի մեջ մտնող իրավասու ստորաբաժանումների, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության և տարածքային ստորաբաժանումների, բժշկական հանձնաժողովների, բուժհաստատությունների, կայազորային քննչական մարմինների, ՀՀ վարչական դատարանի, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարքագծի, մոտեցումների վերաբերյալ տեղեկությունները:

Փորձել ենք ներկայացնել այն խնդիրները, որոնց հետ առնչվել են քաղաքացիները: Հարկ է նշել, որ նաև առանձնացրել ենք կորոնավիրուսային վարակի ժամանակահատվածում տեղ գտած խնդիրները:

1. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության, դրա տարածքային ստորաբաժանումների (նախկինում՝ զինկոմիսարիատներ) վարքագիծը զորակոչի ընթացքում

Զորակոչի գործընթացում ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներն ունեն կարևոր դեր հաշվառման ենթակա անձանց եւ զորակոչիկներին իրազեկելու հարցում: Այնուամենայնիվ,

զինկոմիսարիատները պատշաճ կերպով չեն իրականացնում իրենց վերապահված գործողությունները, մասնավորապես.

- **քաղաքացիների ծանուցումը**, չնայած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինկոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը, չի իրականացվում պատշաճ կարգով: Փոխարենը՝ ծանուցման թերթիկը հանձնում են կամ տանը գտնվող այլ անձանց, կամ ծանուցում են զանգի միջոցով, երբեմն՝ ոչ գորակոչի ենթակա անձին:
- Նույնը տեղի է ունեցել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետությունում Կառավարության կողմից 18 օգոստոսի 2021 թվականին ընդունված «Վարժական հավաքներ հայտարարելու ես դրա ապահովման համար ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմինների տրանսպորտային միջոցները ներգրավելու մասին» N 1356-Ն որոշմամբ հայտարարված պահեստագործի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստագործայինների երեք ամիս ժամկետով՝ 2021 թվականի օգոստոսի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը, վարժական հավաքների մասնակցության ընթացքում:²

² Այնուհետև, Կառավարության կողմից 2 սեպտեմբերի 2021 թվականին ընդունվեց «Վարժական հավաքներ հայտարարելու մասին» N 1409-Ն որոշումը, որով հայտարարվեցին պահեստագործի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստագործայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը:

- Ջորակոչային եւ գորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումների աշխատակիցների կողմից գորակոչիկներին երբեմն չեն տրամադրվում իրենց առողջական վիճակի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, այլ տրամադրվում է դրանց միայն մի մասը, չնայած հարկ է ընդգծել, որ նախորդ գորակոչերի համեմատությամբ ներկայացվող գորակոչերին խնդրի հետ քաղաքացիներն առնչվում են առավել հազվադեպ:
- Ջորակոչային եւ գորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումներից մեկի պետը ուստիկանության քննիչին հրահանգել է գորակոչիկին ներկայացնել զինկոմիսարիատ, այն բանից հետո, երբ գորակոչիկը արդեն իսկ զինկոմիսարիատ ներկայանալով հրաժարվել է ծանուցագրից՝ ԿԲՀ եզրակացության հետ համաձայն չլինելով:
- ՀՀ ՊՆ գորակոչային եւ գորահավաքային համալրման ծառայության աշխատակիցների կողմից խախտվում է անձի գաղտնիության իրավունքը, մասնավորապես՝ վերջիններս սպառնում են այլ անձանց հայտնել նրանց՝ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչ լինելու մասին:
- Ջորակոչիկների բժշկական զննության կազմակերպումը բավարար կերպով կարգավորված չէր կորոնավիրուսային համավարակի ընթացքում, քանի որ քաղաքացիները ստիպված էին լինում բժշկական հետազոտություններն անցնելու համար տեւական ժամանակ սպասել բուժհաստատություններում, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ՊՆ-ից հայտնել էին, որ 2020 թ. ամառային գորակոչի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով ՀՀ ՊՆ տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին կարգադրվել է **կապ հաստատել տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների հետ** և ճշտել, ստեղծված իրավիճակով պայմանավորված, օրվա հնարավոր թողունակությունը՝ **ապրիլի 1-ից գորակոչիկների բժշկական զննությունն իրականացնելու համար**: Միեւնույն ժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղար Ա. Սարգսյանը հայտնել էր, որ **մարտի 1-ից դադարեցվել են** ինչպես ՀՀ ՊՆ տարածքային ստորաբաժանումների, այնպես էլ՝

բժշկական հանձնաժողովների աշխատանքները: 2020 թ. մարտի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Շուշան Ստեփանյանը իր **ֆեյսբուքյան էջում հայտնեց**, որ Կառավարության որոշմամբ բուն գորակոչը, այսինքն՝ զինված ուժերի համալրումը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներով կիրականացվի 2020 թվականի հուլիսի 1-ից օգոստոսի 30-ը ներառյալ, իսկ գորացրումը՝ 2020 թվականի հուլիսի 1-ից օգոստոսի 11-ը ներառյալ: Միաժամանակ հայտնեց, որ գորակոչային նախապատրաստական աշխատանքները կսկսվեն մայիսի 1-ից: Բացի այդ, ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարը զինկոմիսարիատների աշխատակիցների՝ վարակից պաշտպանվելու համար անհրաժեշտ պարագաների ապահովման մասով նշել է, որ զինկոմիսարիատները, ըստ գործառույթներից բխող անհրաժեշտության, ապահովվում են անհրաժեշտ պարագաներով, սակայն Կազմակերպություն դիմած քաղաքացիները հայտնել են, որ շատ դեպքերում անվտանգության կանոնները եւ պաշտպանիչ միջոցներից օգտվելու պայմանները չեն պահպանվել: Ավելին, զինկոմիսարիատներում կամ կենտրոնական հավաքակայանում հերթի մեջ սպասող գորակոչիկներից ոչ բոլորն են դիմակ կրել, իսկ զինկոմիսարիատում դիմակ բաժանելուց հետո էլ որոշ մարդիկ շարունակել են դրանք չկրել, իսկ զինկոմիսարիատի աշխատակիցները նրանց չեն պարտադրել անել դա:

- Բացի այդ, զինկոմիսարիատներում կամ կենտրոնական հավաքակայանում չի պահպանվել անհրաժեշտ սոցիալական եւ ֆիզիկական հեռավորությունը:
- Կորոնավիրուսային համավարակի տարածման կանխարգելմամբ պայմանավորված ՀՀ-ում արտակարգ դրության հայտարարման սկզբնական շրջանում հասարակական տրանսպորտի միջոցների չաշխատելու պատճառով որոշ գորակոչիկներ հնարավորություն չեն ունեցել ծանուցման ժամկետներում մարզերից ներկայանալ մայրաքաղաք՝ բուժզննությունների, իսկ տաքսի ծառայություններից ոմանք օգտվել չեն կարողացել սոցիալական դրության պատճառով, իսկ ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման

ծառայության ստորաբաժանումների կողմից համապատասխան միջոցներ ձեռք չեն առնվել:

2. Բժշկական հաստատությունների վարքագիծը գորակոչի ընթացքում

Զորակոչի գործընթացում գորակոչիկների բժշկական հետազոտություններն իրականացնելիս եւ առողջական վիճակով պայմանավորված զինվորական ծառայությանը պիտանիության որոշումների վրա էական ազդեցություն եւ դեր ունեն բժշկական հաստատությունները: Ընդ որում դա վերաբերում է ոչ միայն այն բժշկական հաստատություններին, որոնք ընդգրկված են նախագորակոչային եւ գորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական հետազոտություն եւ բուժում իրականացնող բժշկական հաստատությունների ցանկում, այլեւ մասնավոր բուժհաստատությունները: Ի դեպ, նշենք, որ եթե նախկինում մասնավոր բժշկական հաստատությունները հիմնականում հրաժարվում էին բժշկական զննության ենթարկել գորակոչի ենթակա անձին եւ տրամադրել եզրակացություն, ապա այս խնդրի հետ քաղաքացիները առավել հազվադեպ են առնչվել նշված գորակոչերի ընթացքում:

- Շարունակվում է արհեստական խոչընդոտների ստեղծման պրակտիկան բուժհաստատությունների կողմից: չեն տրամադրում առողջական վիճակի հետազոտման ակտերի և բժշկական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացությունների օրինակները, չնայած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով

ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին: Ինչպես նաև, ՀՀ Կառավարության 405 որոշման Հավելված 1-ի 36 կետում սահմանված է բուժհաստատության կողմից քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման եւ բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների եւ բուժման արդյունքների մասին տեղեկություններ տրամադրելու պարտավորությունը:³

- Պայմանագրային զինձառայության անցնելու համար բուժօգնության կազմակերպման և դրանով պայմանավորված՝ հոսպիտալներում գտնվող անձնանց՝ կորոնավիրուսային վարակից պաշտպանվելու մասով ՀՔԱՎ-ի հարցերին ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը հայտնել է, որ արգելվել է հոսպիտալների կողմից քաղաքացիների սպասարկումը:
- Բուժհաստատությունների կողմից զորակոչիկների հիվանդության պատմության բժշկական քարտ բացելը տեւել է բավականին երկար եւ որի հետևանքով գոյացել են հերթեր, ինչը պարունակում է համավարակի տարածման ռիսկեր:
- Պետության կողմից տրամադրվող անվճար բուժօգնության շրջանակներում երբեմն առաջարկվում է առավել անարդյունավետ անվճար բուժում:

3. Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների վարքագիծը զորակոչի ընթացքում

- Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովները բժշկական փորձաքննություն իրականացնելիս հաշվի չեն առնում զորակոչիկների առողջական վիճակի

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121636>

գաղտնիության իրավունքը եւ գորակոչիկների գննությունն իրականացնում են այլ գորակոչիկների կամ այլ անձանց ներկայությամբ: Այս խնդրի մասին բարձրաձայնել են գրեթե բոլոր գորատչերի ընթացքում, սակայն մինչ օրս խնդիրը լուծում չի ստացել: Ավելին, կորոնավիրուսային համավարակի ընթացքում բժշկների սենյակներում միաժամանակ գտնվել են մինչեւ 10 եւ ավելի հոգի՝ առանց պահպանելու անհրաժեշտ հեռավորությունը:

- Նշված մարմինները մի քանի առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկի բժշկական գննությունը չեն իրականացնում բոլոր խնդիրներով բանավոր այն հիմնավորմամբ, որ մեկ հիվանդությամբ կամ մեկ այլ հիմքով ամեն դեպքում գորակոչիկին պետք է տրամադրվի տարկետում, կամ գորակոչիկը պետք է ազատվի զինվորական ծառայությունից: Արդյունքում չի կայացվում եզրակացություն առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ: Այս խնդիրը եւս մնացել է չլուծված եւ դրսևորվել է բոլոր նախկին գորակոչերի ընթացքում:
- Մյուս կողմից՝ այլ առողջական խնդիրների հիմքով տարկետում ստանալու դեպքում հաջորդ գորակոչին գորակոչիկների բուժգննություններն իրականացվում են թերի, չեն բացահայտվում նոր ի հայտ եկած առողջական խնդիրները, որը հիմք է հանդիսանում հետագայում նրանց պիտանի ճանաչելու համար :
- Զորակոչիկների գանգատները չեն արձանագրվում գորակոչի ընթացքում իրականացվող բուժգննությունների ժամանակ:
- Սեզոնային հիվանդությունների առկայության դեպքում երբեմն հաշվի չեն առնվում առանձնահատկությունները՝ կապված եղանակային պայմանների հետ, մասնավորապես՝ ալերգիայի, անգիոտրոֆոներոզ եւ այլն:

4. Կենտրոնական բժշկական հանձնաժողովի վարքագիծը գորակոչի ընթացքում

Համաձայն ՀՀ կառավարության 405 որոշման՝ ԿԲՀ-ի գործառույթներն են՝

1) զինվորական կոմիսարիատներում նախնական բժշկական հետազոտում և փորձաքննություն անցած գորակոչիկներին փորձաքննության ենթարկելը,

2) նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց բժշկական փորձաքննության աշխատանքներում գործնական և մեթոդական օգնություն ցուցաբերելը զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին,

3) նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց հետազոտման և բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առողջապահական մարմինների հետ համագործակցելը,

4) գորակոչիկների բժշկական փորձաքննության արդյունքներով եզրակացություն կայացնելը,

5) զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործունեությունը վերահսկելը,

6) անհրաժեշտության դեպքում նախկինում կայացրած իր եզրակացությունները վերանայելը:

Ախտորոշումը ճշտելու նպատակով՝ բավարար տվյալների բացակայության կամ համապատասխան լաբորատոր-գործիքային հետազոտություն անցած չլինելու կամ հետազոտական փաստաթղթերի միջև հակասությունների դեպքերում, ԿԲՀ-ն կարող է հետազոտությունը պահանջող բժիշկ-մասնագետի գրավոր հիմնավորմամբ գորակոչիկին ռազմաբժշկական կամ քաղաքացիական բժշկական հաստատություն լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտության ուղեգրելու վերաբերյալ տալ եզրակացություն:

- Սակայն անհրաժեշտ է փաստել, որ շատ դեպքերում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը չի համապատասխանում գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ակտերով հաստատված ախտորոշումներին: Մինևույն առողջական խնդրի առկայությամբ երկու տարբեր գորակոչերին գորակոչիկները փորձաքննվում են միմյանցից էականորեն տարբերվող հողվածներով՝ արդյունքում կայացվում է գորակոչիկի համար ոչ բարենպաստ որոշում:
- Բացի այդ, որոշ հիվանդությունների դեպքում գորակոչիկներին չի առաջարկվում բժշկի կողմից ցուցված վիրահատության իրականացումը, որի դեպքում

պիտանիության մասին եզրակացություն պետք է կայացվի բուժման ավարտից հետո՝ կախված դրա արդյունքներից: Նույնիսկ այն դեպքում, երբ գորակոչիկը չի հրաժարվում վիրահատությունից, գորակոչիկին հայտնում են, որ վիրահատությունը կիրականացվի զինվորական ծառայության ընթացքում՝ միանգամից հոսպիտալ գորակոչելուց հետո:

- ԿԲՀ կողմից գորակոչիկը չի ուղեգրվում թանկարժեք հետազոտության, որի արդյունքում գորակոչիկը ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, սակայն գորակոչիկի կողմից սեփական նախաձեռնությամբ հետառտության արդյունքների հիման վրա ԿԲՀ-ն ստիպված է լինում փոժել իր որոշումը՝ գորակոչիկին ճանաչելով ոչ պիտանի զինվորական ծառայության համար:
- Նախկինում տարկետում ստանալուց հետո գորակոչիկները առանց համալիր բուժման հաջորդ գորակոչին ճանաչվում են պիտանի կամ սահմանափակումով պիտանի զինծառայության համար:
- Զորակոչիկների առողջական վիճակի գննության փաստաթղթերը չեն արտացոլում վերջիններիս իրական առողջական վիճակը:
- Բուժզննությունների արդյունքում երկու տարբեր ախտորոշումների դեպքում գորակոչիկը չի ուղարկվում ստուգիչ հետազոտության, իսկ երբեմն հաշվի չեն առնվում գորակոչիկների սեփական նախաձեռնությամբ անցած բուժզննությունների արդյունքները, դրանք չեն հաստատվում կամ ժխտվում, եւ ԿԲՀ կողմից որոշում է կայացնում ոչ ի օգուտ գորակոչիկի:
- Բուժզննությունների հիման վրա ի հայտ եկած հակասական տվյալների առկայության դեպքում ԿԲՀ-ն որոշում կայացնելիս հիմնվում է այն արդյունքների վրա, ըստ որոնց գորակոչիկը համարվում է պիտանի զինվորական ծառայության համար:

5. ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը գորակոչի ընթացքում, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության և վերջինիս կազմի մեջ մտնող իրավասու ստորաբաժանումների վարքագիծը՝ գորակոչիկների և

**զինճառայողների (այդ թվում՝ պայմանագրային) վերաբերյալ կայացված
որոշումների բողոքարկման հետ կապված գործերով**

Նշված գորակոչերի ընթացքում գորակոչիկների իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս Կազմակերպության կողմից գրավոր ընթացակարգով աջակցության ապահովման շրջանակներում գրությամբ կամ տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել ենք ՀՀ պաշտպանության նախարարություն: Մասնավորապես՝ առանձին գորակոչիկների վերաբերյալ ուղարկվել է 22 գրություն՝ 17-ը Կազմակերպության անունից, իսկ 5-ը՝ քաղաքացիների:

Կազմակերպության կողմից ուղարկված գրություններից 23 %-ի դեպքում պատասխան տրամադրվել է օրենքով սահմանված ժամկետներից ուշ, 41 %-ի դեպքում պատասխանները չեն անդրադառնում գրությամբ բարձրաձայնված խնդիրների լուծմանը:

Աղյուսակ 1. ՀՀ ՀՔԱՎ կողմից գորակոչիկների հարցերով ՀՀ ՊՆ ուղարկված գրությունների

պատասխանների ժամկետները և անդրադարձը՝ բարձրացված խնդիրներին

Ուղարկված գրությունների թիվը	Ժամանակին		Ուշացումով	
	Ըստ էության	Ոչ ըստ էության	Ըստ էության	Ոչ ըստ էության
17	8	5	2	2

Անդրադառնալով ՀՀ պաշտպանության վարքագծին՝ հարկ է նշել, որ այս գերատեսչության կողմից տեղեկությունների տրամադրման հարցում նկատվում է գաղտնիության բարձր մակարդակ, որին կանդրադառնանք առանձին վերլուծությամբ:

Ինչ վերաբերում է գորակոչի ընթացքում կազմակերպություն դիմած այն գորակոչիկների գործերին, երբ վերջիններս համաձայն չեն եղել զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին

որոշումների հետ, համապատասխան հիմնավորումներով բողոքարկվում են ՀՀ պաշտպանության նախարարին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարին: Պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների գործերով ևս, երբ վերջիններս չեն համաձայնում զինվորական ծառայության ընթացքում զինվորական ծառայության հետ կապված ընդունվող որոշումների, գործողության կամ անգործության հետ, համապատասխան հիմնավորումներով բողոքարկվում են ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:

Գրեթե բոլոր գործերով իրավասու վարչական մարմինը մերժում է մեր կողմից բերված բողոքները՝ հաստատելով ստորադաս վարչական մարմնի վարչարարության իրավաչափությունը: Ներկայացված վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պատճառ քննարկման առարկա չի դառնում բողոք բերելու փաստական և իրավական հիմքերը, որն էլ հիմք է հանդիսանում նշված որոշումները, գործողությունը կամ անգործությունը հետագայում դատական կարգով բողոքարկելու համար: Մասնավորապես, ներկայացված վարչական բողոքի վերաբերյալ կայացված որոշման մեջ նշվում է գործի նախապատմությունը, այնուհետև առանց փաստական և իրավական հիմնավոր վերլուծության՝ վարչական մարմնի որոշումը ներկայացված բողոքի վերաբերյալ:

Արձանագրում ենք, որ նշված գործերով ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը քննարկվող ժամանակահատվածի համար էական փոփոխության չի ենթարկվել:

6. Կայագորային քննչական մարմինների վարքագիծը զինվորական ծառայության գորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի քննության ընթացքում

Կազմակերպությունն իր գործունեության շրջանակներում շարունակում է զբաղվել այն գորակոչիկների իրավունքների պաշտպանությունը, ովքեր համաձայն չլինելով զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի

ճանաչելու մասին եզրակացությունների հետ, բողոքարկում են վերադաս մարմիններին և դատական ատյաններ: Նշված բոլոր դեպքերում, երբ գորակոչիկը հրաժարվում է զինվորական ծառայության գորակոչվելու ծանուցագիր ստանալուց, անկախ դրա պատճառներից, դեպքի վերաբերյալ ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման միջնորդության հիման վրա համապատասխան կայագորային քննչական մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվում է քրեական գործ և գորակոչիկի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

Սույն գործերով վարույթն իրականացնող մարմինը շարունակում է հաշվի չառնել և պատշաճ քննության առարկա չդարձնել զինվորական ծառայության մեկնելուց հրաժարվելու պատճառները և հիմնավորումները. մասնավորապես, որոշ գորակոչիկներ, համաձայն չլինելով Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հետ, այն բողոքարկում են օրենքով սահմանված կարգով՝ վիճարկելով իրենց վերաբերյալ կայացված պիտանի ճանաչելու մասին եզրակացությունը, սակայն նշված հանգամանքը քննության առարկա չի դառնում քրեական գործի շրջանակներում, հաշվի չեն առնվում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված իր վերաբերյալ կայացված որոշումների բողոքարկման իրավունքը: Նշված հանգամանքը հաշվի չի առնվում նաև քրեական գործերի դատական քննության ընթացքում:

Սույն գործերով վարույթն իրականացնող մարմինը շարունակում է նշանակել դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի հիման վրա քննչական մարմինն իր համար պարզում է՝ արդյո՞ք Կենտրոնական բժշկական հանձնաժողովը ճիշտ որոշում է կայացրել գորակոչիկի պիտանի ճանաչելու մասին հարցի վերաբերյալ, սակայն սույն դեպքում բավարար չէ միայն դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության իրականացումը: Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությամբ հնարավոր է պատասխանել միայն այն հարցերին, թե գորակոչիկն ի՞նչ հիվանդությամբ է տառապում, հիվանդությունը ի՞նչ վաղեմություն ունի և առողջական վիճակի վերաբերյալ այլ հարցեր: Մինչդեռ, ռազմաբժշկական

փորձաքննությունը կարող է պարզել, թե որքանով են օբյեկտիվ եղել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի գործողությունները, ինչ որոշում պետք է կայացվեր գորակոչիկի պիտանի լինելու մասին հարցի վերաբերյալ, ո՞ր հողվածով կամ հողվածներով պետք է վերջինս փորձաքննվեր: Հաշվի առնելով նախորդ վերլուծությամբ բացահայտված խնդիրները, առաջարկել էինք դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու փոխարեն նշանակել դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն՝ հիմքում ընդունելով համապատասխան իրավական ակտի (ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 87-Ն հրամանով) այն սահմանումը, որ գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ, հիվանդությունների հիմնավորվածության և առկայության վերաբերյալ հարցերը լուծվում են դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննության ընթացքում, սակայն նշված առաջարկը մինչ օրս չի ընդունվել:

Հարկ է փաստել նաև, որ ինչպես նախկինում, այնպես էլ քննարկվող ժամանակահատվածում, անկախ նախաքննության ընթացքում իրականացվող քննչական գործողություններից՝ գրեթե յուրաքանչյուր գորակոչի ընթացքում (բացառությամբ այն դեպքի, երբ քրեական գործով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացությունը դեռևս չի ստացվել) քննչական մարմինը գորակոչիկի գործն ուղարկում է ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանում, որպեսզի որոշվի վերջինիս գորակոչման հարցը և ինչպես քննչական մարմինն, այնպես էլ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանումը յուրաքանչյուր գորակոչի ժամանակ գորակոչիկներին «հորդորում» են վերանայել իրենց՝ զինվորական ծառայության չմեկնելու որոշումը և մեկնել զինվորական ծառայության:

Այսպիսով, կրկին արձանագրում ենք, որ գորակոչիկների դեմ հարուցված քրեական գործերով քննչական մարմինները ոչ բոլոր գործերով, բայց շարունակում են դրսևորել գորակոչ ասպահովող մարմնի վարքագիծ:

7. ՀՀ վարչական դատարանի վաքագիծը՝ գորակոչիկների և զինծառայողների վերաբերյալ կայացված որոշումների, գործողության կամ անգործության բողոքարկման հետ կապված գործերով.

Քննարկվող գործերով հիմնական խնդիրը շարունակում է մնալ գործերի քննության ժամկետները: Նախորդ վերլուծությամբ բացահայտված խնդիրները հաշվի առնելով առաջարկել էինք, որ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչի ընթացքում ընդունված վարչական ակտերի, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերով օրենքով ամրագրել վարչական գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որը հնարավորություն կընձեռեր դատարանի որոշումն ունենալ մինչև գորակոչի ավարտը, որպես օրինակ հաշվի առնելով ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով սահմանված հատուկ ժամկետները: Նշված առաջարկը, սակայն, չի ընդունվել, որի հետևանքով իրավիճակը շարունակում է նույնը մնալ. դատական գործերի քննությունը շարունակում է բավական երկար տևել, որի ընթացքում յուրաքանչյուր գորակոչին գորակոչիկը կանչվում է գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում և նորից հետազոտություններ է անցնում, իսկ այն դեպքում, երբ գորակոչիկը չի ստանում ծանուցագիրը և չի մեկնում զինվորական ծառայության, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով արդեն իսկ հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է: Կրկին հաշվի առնելով այն հանգամանքը, որ շարքային կազմի համար գորակոչը մինչև 27 տարին լրանալն է, ապա սույն գործի երկարաժամկետ քննությունը, որը կարող է ներառել նաև բողոքարկումները վերաքննության և վճարելիության կարգով, կարող է այն արդյունքը տալ, որ անձը այլևս ենթակա չլինի գորակոչման՝ տարիքի պատճառով: Օրինակ, Հ. Հ.-ի գործով ՀՀ վարչական դատարանի 21.04.2021 թ. հրապարակված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի շրջանակներում դատական նիստ է նշանակվել 16.02.2023 թ., իսկ Հ. Հ. –ի 27 տարին լրանում է 2022 թ. փետրվար

ամսին, այսինքն, նշանակված դատական նիստի և դրանից հետո դատարանի կողմից կայացվող որոշման ժամանակ Հ. Հ.-ն այլևս ենթակա չի լինելու գորակոչման: Ընդ որում, այս փաստը նշվել է վերաքննիչ բողոքում և վերաքննիչ դատարանից խնդրել ենք գործը քննել և որոշում կայացնել մինչև գորակոչման տարիքի լրանալը:

Ինչպես արդեն նշել ենք, սույն խնդրի լուծումը տեսնում ենք նմանատիպ գործերով գործի քննության համար օրենքով սահմանված այնպիսի ժամկետների սահմանում, որը հնարավորություն կընձեռի դատարանի որոշումն ունենալ մինչև գորակոչի ավարտը:

Միննույն ժամանակ կրկին արձանագրում ենք, որ վարչական դատարանի կողմից գորակոչիկների և զինծառայողների վերաբերյալ կայացված որոշումների, գործողության կամ անգործության բողոքարկման հետ կապված գործերի քննության դեպքում չի դրսևորվել կողմնակալ վերաբերմունք:

8. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարքագիծը՝ վաղաժամ գորացրված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին գործերով.

Ներկայումս ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին Կազմակերպության հինգ գործ: Նշված գործերից երեքով մեր միջնորդությունների հիման վրա նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, և գործերից երկուսով վարույթը կասեցված է, մյուս երկու գործերով ևս նախատեսում ենք ներկայացնել միջնորդություններ՝ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին:

Ինչպես ՀՀ վարչական դատարանի դեպքում, այնպես էլ այս դեպքում հիմնական խնդիրը գործերի քննության ժամկետներն են: Մասնավորապես, վերը նշված հինգ դատական գործերից երեքը դատարանում հարուցվել են 2017 թ., սակայն դեռևս գտնվում են հայցի քննության նախապատրաստական փուլում:

Այս գործերով դատարանի վարքագծի մասին ամբողջական դատողություն անելը կրկին անգամ վաղ ենք համարում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գործերը գտնվում են հայցի քննության նախապատրաստական փուլում և դեռևս օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր չկան:

Այս առումով հարկ ենք համարում կրկին ընդգծել, որ գործով պատասխանողներ ներգրավված ՀՀ պաշտպանության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դրսևորվող միատեսակ դիրքորոշումն ու մոտեցումը չի փոփոխվել. մասնավորապես, վերջիններս բոլոր գործերով շարունակում են պնդել, որ վաղաժամ զորացրված զինծառայողների առողջությանը պատճառված վնասը փոխհատուցելու հիմքերը բացակայում են:

Առաջարկություններ

Ամփոփելով նախկին և նշված գորակոչերին արձանագրված խնդիրները՝ առաջարկում ենք.

1. **ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին** պարտադիր զինվորական ծառայության գորակոչին, տվյալ ժամանակահատվածում հայտարարված վարժական հավաքներին գորակոչիկների ներկայությունն ապահովելու նպատակով փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցել զինկոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը:
2. **ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**՝ բացառել գորակոչիկի առողջական վիճակի գննության վերաբերյալ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև ԿԲՀ որոշումների օրինակների տրամադման մերժման դեպքերը:
3. **ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**՝ իր վերաբերյալ կայացված պիտանիության որոշման հետ համաձայն չլինելու եւ ստորաբաժանում չներկայանալու դեպքում բացառել գորակոչիկին ստիպողաբար ներկայանալու դեպքերը, առավել եւս, եթե գորակոչիկը արդեն իսկ ներկայանալով հրաժարվել է ծանուցագրից:
4. **ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**՝ ապահովել բոլոր գորակոչիկների անձի գաղտնիության իրավունքը :
5. **ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**՝ բացառել գորակոչի ընթացքում բժշկական հետազոտություն անցնելու համար երկար ժամանակով սպասեցնելու արատավոր պրակտիկան եւ սահմանել օրվա ընթացքում առողջական վիճակի հետազոտություն իրականացնելու գորակոչիկների առավելագույն թվաքանակը եւ ժամանակացույցը, առավել եւս՝ քանի

որ դեռևս հաղթահարված չէ համավարակը, դրանով պայմանավորված ապահովել բոլոր պաշտպանիչ միջոցառումները, սոցիալական եւ ֆիզիկական հեռավորությունը:

6. **Բժշկական հաստատություններին՝** գորակոչիկներին ենթարկել համալիր հետազոտություններին՝ նրանց իրական վիճակը բացահայտելու համար: Միեւնույն ժամանակ տրամադրել նրանց առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի օրինակները:
7. **Բժշկական հաստատություններին՝** պետության կողմից տրամադրվող անվճար բուժօգնության շրջանակներում իրականացնել **արդյունավետ եւ որակյալ** անվճար բժշկական միջոցառումներ:
8. **Բժշկական հաստատություններին՝** բացառել համավարակով պայմանավորված խոչընդոտները պայմանագրային զինձառայություն անցնողների բուժօգնության կազմակերպման ընթացքում:
9. **ՀՀ պաշտպանության նախարարությանը՝** Կազմակերպության գրավոր դիմումներին եւ հարցումներին տրամադրել պատասխաններ օրենքով սահմանված ժամկետներում եւ անդրադառնալ դրանցում բարձրաձայնված խնդիրներին:
10. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին՝** բժշկական փորձաքննություն իրականացնելիս ապահովել անձի առողջական վիճակի գաղտնիության իրավունքը:
11. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին՝** իրականացնել մի քանի առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկի բժշկական զննությունը բոլոր խնդիրներով եւ առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ՝ անկախ մեկ խնդրով պիտանիության վերաբերյալ որոշումից եւ անկախ այն հանգամանքից, թե երբ է առաջացել առողջական խնդիրը:
12. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին՝** բացառել գորակոչիկների կողմից գանգատներ չարձանագրելու պրակտիկան:
13. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին՝** հաշվի առնել սեզոնային հիվանդությունների բնույթը եւ առանձնահատկությունները: Եւ միայն դրա հիման վրա կայացնել համապատասխան որոշում

14. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝** տրամադրել այնպիսի եզրակացություններ, որոնց տարբերությունը գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ակտերով հաստատված ախտորոշումների հետ հիմնավորված է:
15. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝** միմյանցից էականորեն տարբերվող հոդվածների դեպքում կայացնել հիմնավորված որոշում:
16. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝** ապահովել ըստ հիվանդությունների՝ մինչ գորակոչը վիրահատական ցուցումների առկայության եւ դրանից չհրաժարվելու դեպքում գորակոչիկների վիրահատության իրականացումը:
17. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝** ապահովել բոլոր անհրաժեշտ հետազոտությունների համար նախատեսված ուղեգր՝ գորակոչիկի պիտանիության վերաբերյալ ճիշտ եւ իրական որոշում կայացնելու համար:
18. **Իրավասու մարմինների** կողմից ընդունված որոշումների, գործողության կամ անգործության դեմ բերված բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պատշաճ քննարկման առարկա դարձնել բողոքի փաստական և իրավական հիմքերը, բողոքի քննարկման արդյունքներով ընդունել փաստարկված և պատճառաբանված որոշում:
19. Պարտադիր զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված **քրեական գործերի** վերաբերյալ՝
 - հաշվի առնել, որ անձը, օգտվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով երաշխավորված հիմնարար իրավունքներից, փորձելով պարզել վարչական մարմնի կողմից դրսևորած վարչարարության իրավաչափությունը՝ վիճարկում է իրեն պարտադիր զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին որոշումը և անձի արարքին քրեաիրավական գնահատական տալ միայն վարչական ակտի, գործողության կամ անգործության վիճարկման արդյունքում ընդունված վերջնական փաստաթղթի

- (դատական ակտ, վարչական մարմնի որոշում և այլ) անբողոքարկելի դառնալուց հետո,
- վերը նշված հանգամանքը հաշվի առնել նաև քրեական գործերի դատական քննության ընթացքում,
 - նախաքննության ընթացքում դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու փոխարեն նշանակել դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն,
 - նախաքննության ընթացքում հայտարարված հերթական գորակոչի ընթացքում գորակոչիկի անձնական գործը չուղարկել և գորակոչիկին չհորդորել ներկայանալ ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում՝ զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի լինելու մասին հարցը կրկին պարզելու և այդ հանգամանքով պայմանավորված չձգձգել նախաքննության ընթացքը:

20. Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ՝

- Պարտադիր զինվորական ծառայության հերթական գորակոչի ընթացքում ընդունված վարչական ակտերի, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերով օրենքով ամրագրել վարչական գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որը հնարավորություն կընձեռի դատարանի որոշումն ունենալ մինչև գորակոչի ավարտը, ինչպես օրինակ սահմանված է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով: